

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԴԸ ՍԱԼԻ
(1567-1622)

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԱՐԵՊԱՇՏ ԿՅԱՆՔԻ

ՄԱՍ Դ՝

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ՄՈՂԹՔԸ ՈՐՊԵՍ ԱՍՏԾՈՒՆ ՄԵՐՁԵՆԱԼՈՒ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԳԼՈՒԽ Ա

Ուշադրություն մի դարձրեք, թե մարդիկ ինչ են ասում ձեր մասին

Հենց որ մահվան ընկերներդ ու բարեկամներդ նկատեն, որ դու խորշում ես աշխարհիկ զբաղմունքներից ու զվարճություններից, կսկսեն չարախոսել քեզ և բերել քաղում առարկություններ: Ոմանք կասեն, որ դու դիմել ես դրան, քանի որ հաջողության չես հասել աշխարհիկ կյանքում, ոմանք կվերագրեն քեզ առանձնահատուկ լինելու ձգտում, կեղծավորություն, ձեռակառություն, առավել բարյացկամները՝ մեկամաղձոտության հակում, ոմանք կմախազադաշնեն, որ կարող ես զրկվել իսասարակական դիրքից, քայքայել առողջությունդ, ժամանակից շուտ ծերանալ, ուրիշները կփորձեն համոզել, որ աշխարհում պետք է ապրել ինչպես բոլորը: Այդ ամենը սուտ է և երեսպաշտություն: Այդ մարդիկ ամեննեւին չեն անհանգստանում նրանց առողջության մասին, ովքեր գիշերները շարունակ տրամադրում են խաղերին և պարերին, բայց լուրջ մտահոգվում են և բժշկվելու խորհուրդ տալիս յուրաքանչյուրին, ով աղոթքով է անցկացրել Ծննդյան տոնին մախորդող գիշերը կամ շատ վաղ արթնացել խոստովանությունից չուշանալու համար: Տեսնում ես, որքան ներողամիտ է աշխարհը իր կամքը կատարողների և որքան խիստ և անարդարացի նրանց հանդեպ, ովքեր ձգտում են կատարել Աստուծո կամքը:

Փրկիչն ասել է. «Եթե այս աշխարհից լինեիք, աշխարհն արդեն, որպես իրենը, ձեզ սիրած կլիներ, բայց որովհետև այս աշխարհից չեք, դրա համար աշխարհը ձեզ ատում է» (Չովի. 15. 19): Եթե մենք աշխատենք գոհացնել աշխարհին, ապա կկործանվենք նրա հետ միասին: Սակայն գոհացնելը այնքան էլ հեշտ չէ: «Եկավ Չովիանձեսը, ո՛չ ուտում էր և ո՛չ խմում. և ասացին՝ նրա մեջ դեռ կա: Եկավ Մարդու Որդին, ուտում է և խմում և դուք ասում եք՝ նա սամարացի է» (Մտթ. 11.18-19, Չովի. 8. 48): Եթե բոլորի հետ միասին խաղանք ու պարենք, մեզ կկշտամբեն, որ կեղծ ենք ու ցուցադրական, եթե չանենք՝

* Սկիզբը «Էջմիածին» ամսագրի Դ, Ե, Զ, Է, Ժ-ԺԱ համարներում:

չարացած ու մեղամաղծոտ: Մեր ուրախությունը կհամարվի անպարկեշտություն, իսկ զգաստությունը՝ մաայություն: Մեր թերությունները կընկալվեն որպես ծանր մեղքեր, իսկ պատահական սխալմունքները՝ դիտավորություն եւ նենգություն: «Սերը չար բան չի խորհում» (Ա Կոր. 13. 4-5), - ասում է Պողոս առաքյալը: Հակառակը, աշխարհը խորամանկ է եւ միշտ չարն է խորհում (Ա Գով. 5. 19), երբ ի վիճակի չէ մեղադրել չար գործերում, մեզ մեղադրում է չար դիտավորություններում: Եթե ձեր խոստովանությունը քահանային երկար տեւի, կասեն, որ հավանաբար ծանր մեղքեր եք գործել, եթե կարճ ուրեմն թաքցնում եք ձեր մեղքերը: Եթե բարկության թեթեւ նշույլ նկատեն, կասեն, որ դուք անտանելի եք, եթե առատածեմնություն դրսևորեք, ձեզ վատնող կհամարեն, եթե տնտեսվարություն՝ ժլատ, իսկ հեզությունը՝ անհեթեթություն:

Այնինչ, վերաբերմունքն այս աշխարհի զավակների հանդեպ բոլորովին այլ է: Նրանք բարկությունը կկոչվի ազնիվ վրդովմունք, ժլատությունը՝ խելամիտ խնայողություն, անկաշկանդվածությունը՝ սիրալիր զրույց: Ուշադրություն մի դարձրու նրանց, բարեկամս: Թող մտադրություններդ հաստատուն լինեն եւ որոշումներդ անփոփոխ: Քո հաստատամտությունը եւ հետեւողականությունը կվկայեն, որ իրոք նախընտրել ես բարեպաշտություն եւ նվիրվել Աստծուն: Մոլորակներն ու գիսաստղերը նույնչափ լուսավոր են թվում, սակայն գիսաստղերը արագ անհետանում են, այնինչ մոլորակները շարունակում են լուսարծակել: Նույնը կարելի է ասել եւ կեղծ ու ճշմարիտ առաքինության վերաբերյալ: Կեղծիքը շատ շուտ է բացահայտվում եւ կորցնում իր գրավչությունը, իսկ ճշմարիտ առաքինությունը միշտ մնում է հաստատուն եւ անփոփոխ: Գովեստին կամ զրպարտությանը արծազանքելու եղանակը մեր առաքինության փորձաքարն է:

Սենք խաչված ենք աշխարհի համար, եւ աշխարհը պետք է խաչված լինի մեզ համար (Գաղ. 6. 14): Այն համարում է, որ մենք հիմար ենք, մենք էլ համարենք, որ այն խելացնոր է:

ԳԼՈՒԽ Բ

Արիության մասին

Թեեւ լույսը, ինքնըստինքյան, հոյակապ է եւ ցանկալի, այնուամենայնիվ կուրացնում է մթության մեջ երկար ժամանակ գտնվող մարդուն: Նախկին անիմաստ զբաղմունքներից, մոլություններից, հետաքրքրություններից հրաժարվելու հաստատ որոշումը կայացնելուց հետո կյանքում տեղի է ունենում զգալի շրջադարձ: Ակզբնական շրջանում լրիվ հնարավոր է, որ հոգում առաջանա որոշակի ընդդիմություն, նույնիսկ տխրություն եւ հուսահատություն: Այդ դեպքում խնդրում ենք, մի փոքր համբերիր, այդ ամենը նորությունից ու անսովորությունից բխող զարմանքի հետեւանք է: Այդ վիճակը կանցնի, եւ դու անհաշիվ մխիթարություններ կունենաս: Գուցեեւ ավստոսանքով հիշես այն փառքը, որ թերեւ վայելում էիր քո սին գործերի մասնակիցների շրջանակում, բայց մի՞թե այն կգերադասես հավիտենական փառքից, որին կարող է արժանացնել միայն Աստված: Անցած տարիների սին եւ ունայն զվարճությունների ու ժամանցի հիշողությունները նորից կայցելեն քեզ զայթակղելու եւ

իրենց կողմը ձգելու քո սիրտը: Սակայն մի՞թե այդ խաբուսիկ ու թեթևամիտ հաճույքների պատճառով կհամաձայնվես իրաժարվել հավիտենական երանությունից: Հավատա ինձ, եթե անսասան մնաս, շատ շուտով բազմաթիվ խորին եւ բերկրալից մխիթարություններ կստանաս, որոնց համեմատ աշխարհիկ հաճույքները նույնն են, ինչ մաղձը մեղրի համեմատ, եւ կհասկանաս, որ ճշմարիտ բարեպաշտ կյանքով ապրած մեկ օրն արժե շատ ավելի, քան աշխարհիկ հաճույքների մեջ անցկացրած հազար տարին (Աղմ. 83. 11):

Բայց տեսնելով, թե որքան բարձր է քրիստոնեական կատարելության լեռը, դու բացականչում ես. «Աստված իմ, մի՞թե ինձ կհաջողվի բարձրանալ»: Համարձակ եղիր, սիրելիս: Այդ, սկզբնական շրջանում մենք անկարող ենք իրականացնելու մեր խնդիրը, այսինքն՝ հասնելու քրիստոնեական կատարելության բարձունքին: Մեր ցանկությունների եւ որոշումների ձեւավորման հետ միասին հետզհետե աճում են մեր հնարավորությունները, ու ամրանում է հույսը, որ թեւերը օրըստօրե կգորանան, ու մենք ընդունակ կլինենք թռչելու: Իսկ քանի դեռ նրանք չեն գորացել, ընթանանք համաձայն նրանց ցուցումների, ովքեր մեզանից առաջ են թեւեր աճեցրել ու կարողացել հասնել բարձունքին: Խնդրենք Աստծուն, որ օգնի մեզ աճեցնելու թեւերը, որպեսզի թռչենք այս կյանքում եւ հանգիստ առնենք գալիք կյանքում՝ հավիտենականության մեջ (Աղմ. 54. 7):

ԳԼՈՒԽ Գ

Գայթակղությունների բնույթի մասին

Գայթակղությունների բնույթի եւ այն տարբերության մասին, որ գոյություն ունի գայթակղության առկայության եւ նրա հետ համաձայնվելու միջեւ

Պատկերացրու, բարեկամս, մի դեռատի օրիորդի, ում ջերմագին սիրում է իր փեսացուն, իսկ մեկ ուրիշը՝ ոմն նեմգամիտ, չար մտադրություններ ունի նրա նկատմամբ: Ի՞նչ է տեղի ունենում:

1. Նեմգամիտը չար առաջարկությամբ ուղարկում է օրիորդի մոտ իր դեսպանին:

2. Օրիորդը կարող է ընդունել կամ չընդունել դեսպանին:

3. Օրիորդը կարող է ընդունել առաջարկությունը կամ մերժել:

Նույնպես սատանան, աշխարհը եւ մարմինը, տեսնելով, որ հոգին ուզում է դառնալ Քրիստոսի հարսնացուն, փորձում են գայթակղել նրան իրենց առաջարկություններով եւ խորհուրդներով. ա) Մեղքն առաջարկված է. բ) Առաջարկությունները դուր են գալիս նրան կամ ոչ. գ) Նա առաջարկությունը ընդունում է կամ մերժում:

Ահա դեպի մեղքը տանող երեք հիմնական աստիճանները.

1) գայթակղությունը.

2) վայելքը.

3) համաձայնությունը:

Թեկուզեւ որեւէ մեղք գործելու գայթակղությունը հետապնդի մեզ ամբողջ կյանքում, եթե չի հրապուրում, եւ չենք համաձայնվում գործելու այն, ապա մեղք չկա: Այս դեպքում փորձության առկայությունը չի հանգեցնում գործողության, այլ միայն տառապանք է պատճառում: Քանի որ այն մեզ չի հրապուրում, մենք չենք դառնում նրա գործակիցը: Սրբերից շատերն են ենթարկվել ցանկասիրության փորձությանը, բայց դիմադրել են եւ նախընտրել կրել ամեն տեսակի տառապանքներ, եւ ոչ միայն չեն զրկվել Աստուծո շնորհից, այլեւ բազմապատկել են այն: Փորձության ժամանակ պետք է զինվել արիությամբ եւ հիշել, որ պարտված չես, քանի դեռ նրանք քեզ դուր չեն գալիս: Մենք կարող ենք գայթակղությունը զգալ, բայց համակրանք ցուցաբերել ոչ մի դեպքում չի կարելի: Համակրել կարող ենք միայն այն բանին, ինչ մեզ հաճելի է: Համաձայնությունը կարող է լինել միայն բավականության արդյունք: Քանի դեռ մեր փրկության թշնամիները չեն օգտագործել դուռը եւ հմայող բոլոր միջոցները, ինչ առաջարկություններ էլ որ անեն, մուտք չեն գործում մեր սիրտը: Եթե մենք անդդվելի ենք եւ չենք հրապուրվում նրանցով, Աստուծո ոչնչով վիրավորել չենք կարող, ինչպես օրիորդը չի անարգել իր փեսացուին, որովհետեւ չի գայթակղվել չար մարդու առաջարկությամբ: Տարբերությունն այն է, որ օրիորդը կարող է բոլորովին վնասել դեսպանին, իսկ մեր անձը միշտ չէ, որ կարող է վերջ տալ փորձությանը, բայց միշտ իրավասու է չհամաձայնվել նրա հետ: Սիա թե ինչու որքան էլ երկար տեւի գայթակղությունը, քանի դեռ տիպաւ է մեզ, երբեք մեզ, չի վնասի: Իսկ ինչ վերաբերում է գայթակղության գրավչությանը, ապա դա հմարավոր է, որովհետեւ մեր հոգին ունի վերին եւ ստորին մասեր, եւ այն դեպքերում, երբ ստորինը չի ենթարկվում վերինին, անձը կարող է եւ գայթակղվել՝ հակադրվելով վերինի պահանջին: Մղվում է այն ահեղ ճակատամարտը, ուր, Պողոս առաքյալի խոսքի համաձայն. «Մարմինը Հոգու հակառակն է ցանկանում» (Գաղ. 5. 17) եւ «Իմ մարմնի անդամների մեջ տեսնում եմ այլ օրենք, որ պայքարում է իմ մտքի օրենքին հակառակ» (Հռ. 7. 23):

Տեսե՛լ եւ երբեւէ մոխիրով ծածկված մեծ խարույկ: Եթե մոտենաս խարույկին նրա հանգչելուց 10-12 ժամ հետո՝ կոժվարանաս գտնել գոնե մեկ վառվող ածխակտոր: Սակայն, ամտարակույս, այն կա, եւ նրա օգնությամբ կարելի է նորից վառել մյուս՝ արդեն հանգած ածխակտորները: Մեծ ու ահեղ փորձությունների ժամանակ նույնը կատարվում է եւ մեր հոգում: Քանի որ գայթակղությունը հրապուրում է հոգու ստորին մասին, ծածկում ամբողջ հոգին մոխիրով եւ այնտեղ դժվար է լինում գտնել առ Աստված սիրո զոհն մեկ առկայծում: Այնուամենայնիվ, թեւ մարմինն ու հոգին շփոթության եւ ալեկոծման մեջ են, մենք դեռ կարող ենք չհամաձայնվել ո՛չ մեղքին, ո՛չ գայթակղությանը, եւ այն, ինչ հրապուրում է արտաքին մարդուն, նողկանք է ներշնչում ներքին մարդուն: Թող փորձությունը պաշարի մեր կամքը, բայց եթե կամքը չի զիջում, հրապուրյրը համարվում է ակամա, եւ քանի դեռ մեղք գործելու համաձայնությունը չի տրվում, հրապուրանքը մեղք չի համարվում:

ԳԼՈՒԽ Դ

Երկու հրաշալի օրինակ

Երանելի Դերոնիմոսը պատմում է մի երիտասարդի մասին, որին բռնապետը չարչարելով հաղթել չկարողացավ և որպես նրան կոտորելու ամենագործող միջոց՝ ընտրեց վայելքը: Երիտասարդին բարակ մետաքսե թելերով կապեցին անկողնուն և բերեցին մի կնոջ, որը պիտի ամեն կերպ գայթակղեր նրան: Նա վերապրեց գայթակղությունների փոթորիկ, բայց սիրտը և կամքը մնացին անհողողող և ի վիճակի չլինելով վեր կենալ, նա ատամներով կտրեց իր լեզուն և թքեց գայթակղեցնող կնոջ երեսին:

Ուշագրավ է եկատերիմա Սիենացու գայթակղությունների դեմ մղած պատերազմի պատմությունը: Նա ստիպված եղավ վերապրել գայթակղությունների մի ողջ տարափ, որոնք թափանցում էին բոլոր գայարարաններից ներս, բայց նրա սիրտը մնում էր անսասան: Երկարատև տառապանքներից հետո նրան երեւաց Տերը: Արթուրին հարցրեց, «Ո՞ր էիր Դու մինչ այժմ, երբ ես տառապում էի կեղտի ու խավարի մեջ»: «Ես քո սրտում էի», - պատասխանեց Տերը: «Ինչպե՞ս կարող էիր Դու լինել իմ սրտում, երբ այդքան պիղծ, գարշելի և անօրեն բաներ էին վրդովում ինձ»: «Ասա,- դիմեց նրան Տերը,- քեզ դա հաճո՞ւյք էր պատճառում, թե՞ վիշտ»: «Ծայրահեղ վիշտ ու ցավ», - պատասխանեց սրբուհին: «Ո՞վ էր ներշնչելու այդ վիշտն ու ցավը, եթե ես չլինեի քո սրտի խորքում: Այլպես այն ամենը, ինչ շրջապատում էր քեզ, կներխուժեր քո սիրտը, և դու հաճույքով կընդունեիր, ինչը կնպաստեր քո հոգու կործանմանը: Բայց ես հաղորդում էի քեզ այդ տհաճությունն ու դիմադրությունը, այնպես որ քո սիրտը հրաժարվում էր բոլոր գայթակղություններից՝ ատելությամբ լցվելով և նրանց, և ինքն իր հանդեպ: Պայքարն ու տառապանքները ամրացնում էին քո ամաքխությունը և է՛լ ավելի զորացնում քեզ»:

Տեսնում ես, բարեկամս, խարույկը ծածկված էր մոխիրով, գայթակղությունները և հաճույքները ձգտում էին գրավել սիրտը, շրջապատել էին կամքը, որը Փրկչի օգնությամբ դիմադրում էր դառնամալով, ընդվզելով, մերժելով գայթակղեցնող չարիքը, չհամաձայնելով իրեն պաշարող մեղքին: Ո՞վ Աստված իմ, ինչպիսի՞ վիշտ Աստծուն սիրող հոգու համար, չիմանալ, իր հետ է Աստված, թե ոչ, մի՞թե մարել է աստվածային սիրո կայծը, որի համար նա պայքար է մղում:

ԳԼՈՒԽ Ե

Հոգու քաջալերում փորձությունների ժամանակ

Բարեկամս, Աստված թույլ է տալիս ենթարկվելու այսպիսի դժգոհ փորձությունների միայն այն անձանց, ում ուզում է հասցնել իր ամարատ ու կատարյալ սիրո բարձրությանը: Սակայն ամենեւին չի նշանակում, որ փորձություններից հետո սերը արդեն ձեռք է բերված, որովհետև շատ անգամ է պատահել, որ, դժգոհ հարձակումներից դիմացողները հետագայում չեն ցուցաբերել բավականաչափ հավատարմություն և պարտություն կրել շատ ավելի թույլ, աննշան փորձություններում: Ես ասում եմ այս մասին, որպեսզի

վրա հասած մեծ փորձությունների ժամանակ իմանաս, որ դա նշան է Աստուծո ուղորմածության, եւ դրա շնորհիվ կարողանաս դիմակայել փորձությանը, բայց զգույշ եղիր եւ խոնարհ՝ իմանալով, որ մեծ փորձություններ հաղթահարելուց հետո դու կկարողանաս հաղթահարել եւ ավելի թույլերը՝ միայն Աստծուն մշտական հավատարմություն պահպանելու պայմանով:

Ինչ փորձությունների էլ ենթարկվես, եթե քո կամքը չի հակվում նրանց կողմը եւ չի համաձայնում նրանց հետ, նույնիսկ հաճելի թվալու դեպքում՝ մի՛ շփոթվիր, դու չես վերափոխել Աստծուն:

Գիտակցությունը կորցրած մարդու սրտի բաբախումից համոզվում ենք, որ նա կենդանի է, եւ դեռ հնարավոր է ուշքի բերել նրան: Երբեմն գայթակղությունները այնքան սաստիկ են, որ թվում է, թե վրա է հասել եւ ֆիզիկական, եւ հոգեկան մահը: Ստուգելու համար ձեռքը դնենք սրտին, տեսնելու՝ արդյոք պատրա՞ստ է նա կատարելու իր պարտքը, մերժել գայթակղությունը եւ հրաժարվել նրա թելադրած բավականությունից: Քանի դեռ սրտում առկա է գայթակղությունը մերժելու պատրաստակամությունը, նրանում չի մարել Աստուծո սերը, եւ Դիսուս Փրկիչը, թեեւ ծածուկ, ներկա է այնտեղ: Աղոթքը, խորհուրդները, Աստծուն ապավինելը կօգնեն վերադառնալ բերկրալից ու լիարժեք կյանքին:

ԳԼՈՒԽ 2

Ինչպես գայթակղությունը եւ մտածումի վայելքը չեն կարող վերածվել մեղքի:

Ենթադրեցինք, որ օրիորդը ոչ մի առաք չէր տվել իրեն գայթակղիչ առաջարկություն անելու: Դիմա պատկերացնենք, որ նա թեկուզ աննշան, բայց առիթ է տվել, ուրեմն մեղավորը իմքն է: Եթե մարդը գիտի, որ կարող է հանդիպել փորձության եւ չի խուսափում դրանից, ինքն է պատասխատու հետեւանքների համար:

Այսպես, օր. եթե մարդուն հայտնի է, որ խաղի ընթացքում բարկանալու է եւ անիծելու, չպիտի մասնակցի խաղին, որովհետեւ պատասխանատու է բոլոր փորձությունների համար, որոնց հանդիպելու է: Եթե գիտեմ, որ այս կամ այն խոսակցության ժամանակ փորձության մեջ եմ ընկնելու, չեմ մասնակցի, քանի որ ինքս մեղավոր կլինեմ բոլոր նախատեսված եւ չնախատեսված հետեւանքներում: Եթե կարելի է կանխել փորձությունը, չանել մեղք է: Անկախ այն բանից՝ մեծ է փորձությունը թե փոքր, եթե կարելի է կանխել այն, չանել մեղք է:

Այն օրիորդը, որի մասին խոսում էինք, չհամաձայնվեց անագմիվ առաջարկությանը, բայց եթե նույնիսկ մի փոքր հաճույք զգաց դրանից, արդեն մեղք գործեց, որովհետեւ մեղքը ելնում է սրտից եւ առանց սրտի համաձայնության մարմնապես մեղք գործելն անհնարին է: Այդ պատճառով, եթե փորձության ես ենթարկվել, քննիր ինքդ քեզ, արդյո՞ք իսկապես պատահականություն է, թե դու ես առիթ տվել, այդ դեպքում փորձությունը արդեն մեղք է, չէ որ դու կարող էիր կամ պարտավոր էիր կանխատեսել եւ խուսափել նրանից, եւ եթե այդպես վարվեիր, գայթակղությունը մեղք չէր համարվի:

Եթե կինը առիթ չի տալիս, որ իրեն սիրահետեն, բայց հաճույք է զգում դրանից, արդեն մեղք գործելու ճանապարհին է: Երբեմն հաճույքը վերաբերում է ոչ թե բռն մեղքին, այլ որբւէ հարող համգամանքի: Պետք է զգուշանալ, որ մեր զգացմունքներին այլ շարժառիթներ չխառնվեն, որպեսզի մեղքին տանող ճանապարհը չբացվի:

Օր. մեկին առաջարկում են վրեժ լուծել իր թշնամուց, նա չի համաձայնվում, բայց ահա նկարագրում են գործելու այնպիսի հետաքրքիր ու սրամիտ տարբերակներ, որոնք, ինքնըստինքյան, շարժում են նրա հետաքրքրասիրությունը եւ աննկատելիորեն մղում գործողության, որն, ի վերջո, վրեժխնդրություն է հակառակորդից: Հաճախ բավականության զգացումին գայթակղություն է հարում, պետք է շատ զգոն լինել: Նույնիսկ թեթեւ մեղքը ծանրանում է, եթե մենք, նկատելով, որ այն, ինչ մեզ հաճելի է, չարիք է պարունակում իր մեջ, շարունակում ենք սակարկել, չհամարձակվելով ոչ ընդունել, ոչ մերժել այն՝ հորինելով հաճույքից չիրաժարվելու նորաճոր պատրվակներ: Սակայն եթե գիտակցաբար եւ հոժարակամ թույլատրելի ենք համարում հաճույք ստանալ գայթակղիչ եւ կասկածելի հանդիպումներից ու զբաղմունքներից, մեծ մեղք ենք գործում, որը ժամանակի ընթացքում կարող է ախտի վերածվել:

ԳԼՈՒԽ Է

Միջոցներ սաստիկ փորձությունների դեմ

Փորձությունների հանդիպելիս վարվիր փոքրիկ երեխաների պես: Վտանգի դեպքում նրանք իսկույն նետվում են դեպի ծնողները կամ էլ օգնության կանչում նրանց: Դիմեք Աստծուն, փնտրեք Նրա օգնությունը եւ պաշտպանությունը: Տերն ասել է. «Աղոթեցեք, որ փորձության մեջ չընկնեք» (Մտթ. 26. 41): Եթե գայթակղությունը չի հեռանում եւ նույնիսկ սաստկանում է, մտովի ապավինեք Սուրբ Խաչին: Նրա տեւողության ամբողջ ընթացքում օգնություն հայցեք Խաչյալ Տիրոջից՝ բողոքելով գայթակղության դեմ, հրաժարվելով համաձայնել նրան: Մի նայիր քեզ գայթակղեցնող առարկային կամ երեւութին, այլ հայացքդ ուղղիր միայն Խաչյալ Քրիստոսին, հակառակ դեպքում քո արիությունը կարող է տատանվել: Ուշադրությունդ շեղիր որբւէ օգտակար գործ կատարելով, որը հետզհետե կգրավի քեզ ու դուրս կմղի քո սրտից գայթակղիչ մտքերը:

Անկեղծ զրույցը զորավոր միջոց է թե՛ մեծ, թե՛ փոքր փորձությունների դեմ: Որովհետեւ թշնամին առաջին հերթին պարտադրում է լռել այն անձին, ում ուզում է հրապուրել, ինչպես գայթակղել ցանկացողը համոզում է կնոջը կամ աղջկան՝ ոչինչ չասել ամուսնուն կամ հորը: Աստված, ընդհակառակը, ուզում է, որ մենք անկեղծ լինենք մեր հոգեւոր առաջնորդների եւ ավագների հետ: Եթե, այնուամենայնիվ, փորձությունը շարունակում է հետապնդել, մենք նույնպես պիտի համառոնք եւ դիմադրենք: Որքան էլ հոգին տագնապի, քանի դեռ վստահ ասում է «ոչ», փորձությունը նրա վրա իշխանություն չունի: Թշնամու հետ մի՛ վիճիր, միայն կրկնիր Փրկչի խոսքերը, «Ետե՛ս գնա, սատանա՛, որովհետեւ գրված է՝ պիտի երկրպագես քո Տեր Աստծուն եւ միայն նրա՛ն պիտի պաշտես»

(Ստթ. 4. 10): Փորձչին հայացքի անզամ մի արժանացրու, այլ, մեջքդ նրան դարձնելով, դիմիր քրիստոսին եւ հիշիր միայն Նրան հավատարիմ մնալու քո մտադրության մասին:

ԳԼՈՒԽ Ը

Ինչպես դիմակայել թեթեւ փորձություններին

Որքան անհրաժեշտ է, անդրդվելի արիությամբ պայքարել մեծ փորձությունների դեմ, նույնքան կարելու է կարողանալ հաղթահարել եւ թեթեւները, քանի որ եթե առաջինները գերազանցում են երկրորդներին ուժգնությամբ, ապա երկրորդները գերազանցում են քանակով, այդ պատճառով հաղթանակը նրանց նկատմամբ կարելի է համեմատել մեծ փորձություններում հաղթանակ տանելու հետ:

Գայլերն ու արջերը անտարակույս ավելի վտանգավոր են, քան մոծակները, բայց վերջիններս փորձում են մեր համբերությունը իրենց անդադար հարձակումներով: Դյուրին է մարդասպանություն չգործելը, բայց դժվար է զսպել բարկության պոռթկումները, որի առիթները կարող են ստեղծվել ամեն րոպե: Դյուրին է դիմակայել շնությանը, բայց որքան ավելի դժվար է թույլ չտալ անհամեստ հայացքներ, թեթեւամիտ հարաբերություններ, շողոքորթություն եւ այլն: Դժվար չէ հրաժարվել սուտ վկայությունից, բայց դժվար է երբեք չստելը: Դժվար չէ հարբեցող չլինել, բայց դժվար է միշտ սթափ մնալը: Դժվար չէ մարդու մահը չցականալը, բայց ավելի դժվար է ոչ մեկին ոչ մի չարիք չցականալը: Դժվար չէ երբեք չգրպարտել, բայց դժվար է ընդհանրապես չդատելը: Ի վերջո, այդ մանր փորձությունները՝ բարկություն, կասկածանք, խանդ, նախանձ, թեթեւամտություն, ունայնամտություն, երկդիմություն, ձեւականություն, անմաքուր մտքեր, մշտապես պաշարում են նաեւ քարեպաշտ կյանքով ընթացողներին: Սիա թե ինչու, սիրելի՛ բարեկամ, մենք պարտավոր ենք քանադարար պատրաստվել դրանց դեմ պայքարելու: Մեծ փորձություններին դիմակայելու համար նախ պետք է սովորել ետ մղել թեթեւ եւ փոքր գայթակղությունները, ինչպես թշնամու հարձակումները:

ԳԼՈՒԽ Թ

Միջոցներ թեթեւ փորձությունների դեմ

Իրենց հաճախակի խայթոցներով մեզ անհանգստացնող ու ձանձրացնող մանր գայթակղությունների՝ սնափառության, կասկածամտության, տրտմության, խանդի, նախանձի, փուչ սիրահարությունների դեմ լավագույնը, որ կարելի է անել, խուճապի չմատնվելն է: Եթե մենք հաստատ որոշել ենք ծառայել Աստծուն, դրանք ընդամենը նեղություն են պատճառում մեզ, բայց վնաս հասցնել չեն կարող:

Այդ հարձակումներին ուշադրություն մի՛ դարձրու, մի՛ մտածիր դրանց մասին, մի՛ պատասխանիր, խայթելու դեպքում մի՛ պայքարիր դրանց դեմ, այլ պարզապես վանիր, թոթափիր քեզանից: Արա նրանց ուզածի հակառակը՝

համուն Աստուծո սիրո: Սերն առ Աստված գլխավոր միջոցն է բոլոր արատների դեմ: Եթե բոլոր պարագաներում վարժվես իսկույն դիմելու Նրան, այլևս զայթակղությունների վերլուծության անհրաժեշտություն չի լինի: Գեմց որ շփոթության մեջ ընկնես, անմիջապես դիմիր այդ մեծագույն միջոցին, ինչ առավել կարելոր է նաեւ այն պատճառով, որ երբ հակառակորդը նկատում է, որ մեմք դիմում ենք Աստծուն ամեն մի գայթակղության դեպքում, նա դադարում է մանր-մուսր փորձություններով հաճախակի անհամզուտացնել մեզ, քանի որ համոզվում է, որ արդյունքի չի հասնում:

ԳԼՈՒԽ Ժ

Ինչպես սիրտը կոփել փորձությունների դեմ

Ժամանակ առ ժամանակ քննիր, թե որ կրքերն են գերիշխում քո մեջ: Աշխատիր նրանց հակառակ հատկություններ զարգացնել մտքիդ, խոսքիդ, գործերիդ, կենսակերպիդ մեջ: Օր.¹ եթե հակված ես սնափառությանը, հաճախ մտածիր մարդկային կյանքի ունայնության մասին: Մահվան շեմին որքան կամաչես քո սնափառությունից, որքան անվայել է այն ազնիվ սրտին, որքան նման երեխայական զբաղմունքի: Մերժիր սնափառությունը, քամահրանքով արտահայտվիր նրա մասին եւ հետզհետե կսկսես առել այն: Վարժեցրու քեզ խոնարհության, մանավանդ նվաստացուցիչ համարվող գործեր կատարելուն: Կամաց-կամաց սնափառության հակումը քո մեջ կսկսի թուլանալ, եւ երբ վրա հասնի փորձության ժամը, քեզ ավելի հեշտ կլինի նրա դեմ պայքարելը:

Եթե հակված ես ժլատության, հաճախ մտորիր այդ մեղքի անմտության մասին, որը մարդուն ստրուկ է դարձնում այն ամենին, ինչը կոչված է ծառայելու նրան, մտածիր, որ մեռնելիս դրանք ամենեւին քեզ պետք չեն լինելու: Դրվատիր երկրային բարիքների նկատմամբ արհամարհանքը, հարկադրի ինքդ քեզ ողորմություն բաժանելու եւ բարիք գործելու ոչ մի առիթ բաց մի թող:

Եթե սիրո ետեւից ես ընկնում, մտածիր, որքան վտանգավոր է դա եւ քո, եւ ուրիշների համար: Մտածիր, որքան անվայել է խաղալ հոգու լավագույն զգացմունքների հետ, ինչպիսի ծայրահեղ թեթեւամտություն է վերածել այն զվարճության, ժամանցի: Խորշիր այդ ամենից, հաճախ խորհիր սրտի մաքրությունը եւ պարզությունը պահպանելու անհրաժեշտության մասին:

Այսպիսով, խաղաղ ժամանակ, այսինքն երբ գերծ ես քեզ առավել անհամզուտացնող մեղքի հարձակումներից եւ գայթակղություններից, որքան հնարավոր է եռանդազին վարժվիր նրան հակառակ առաքինությունների մեջ եւ նույնիսկ առիթի բացակայության դեպքում մի վարամիր, զմա ընդառաջ, անցիր հակահարձակման: Այս կերպ դու լավագույնս կամրապնդես սիրտդ ապագա փորձությունների դեմ:

Շարունակելի

*Ռուսերենից թարգմանեց
ՍՐՓԻՆԵ ՊԱՊԱՅԼՆԸ*